

ՔԱԺՆԵԳԻՆ  
Տարեկան  
100 Դրու  
Վեցամսեայ  
50 Դրու  
  
Հասցէ  
ԲԱՅՐԻ ԳՈՒՅՈՒՄԺԵԱՆ  
  
Հասցէ  
ԲԱՅՐԻ ԳՈՒՅՈՒՄԺԵԱՆ  
  
Գրասենտայ  
ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՏՈՒՆ  
  
Հասցէ 5 Դրու.



# ՊԱՏՐԱՍ

V. KIBRISLIAN

ԿԻՍՄՍԵԱՅ ՕՐԿԱՆ ՀԱՅ ՊՈՅ-ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ. ԻԶՄԻՐ

**BADRASD**  
Organe des Boy-Scouts Arméniens.  
de SMYRNE

**ՄԻԱԲԱՏ**  
ՕՐԴԱՆՈՆ ԵՄ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՆ  
ՏՄՐՆԻՏ

ՆԵՐԿԱՅ ՄԱՆՈՒԿՆ Է ԱՊԱԳՍՅ ՄԱՐԴԵ

**ABONNEMENT**  
Annuel  
10 Frcs.  
Six-mensuel  
5 Frcs.  
  
Direct. et Ger. Resp.  
PETER COUYOUMDJIAN  
  
Adresse  
BAKIRGIAN FRÈRES  
  
Bureaux  
SCOUT-ROOM ARMEN.  
  
Հասցէ 5 Դրու.



## ԾՆՈՒՆԴԻ Թ Ի Ի



Դ. Բանակի սկաուտները դրօշակախաղի ժամանակ  
Les Boy-Scouts Arméniens de la 3me. troupe  
de Smyrne en excursion

Հայ Սկաուտ, եւ Հայ բարեկեցիկ պատանի, կատարած  
էս պարտականութիւնը թշուառին հանդէպ

### Խմբագրութիւն

Հայ Սկաուտներու Օրկան  
«Պատրաս»ի

Ամէն անգամ որ առիթը կուտե-  
նայ կարգաւոր սկաուտական շարժու-  
թիւն յառաջապահը եղող «Պատրաս»ի  
խմբագրական քիւնը՝ մեր աչիքն առ-  
նում պատկերացած կը տեսնենք Հայ  
Սկաուտներու մաքուր եւ հաստատակա-  
նային դեպքի հոգեկան բարձրութիւնը՝  
որ է իսկապէս հայ մեքի ու սրտի ինք-  
նայատուկ ներշնչումը:

Ձեր դեռաւոր հոգիներուն մէջ փայ-  
լող անսպառ եռանդը, ամէն կերպով  
զննահետեւի է, եւ Ձեր անվիաս ջանքե-  
րն ալ մեծապէս արժանի փառաբանու-  
թեան:

Կ'օրհնենք զՁեզ ամենեւ, Հայու-  
թեան ապագայ փառքի կենսունակ  
պոստի եւ դեռաւոր ոյժեր, եւ կը  
մաղթենք Ձեզ ողի յարատեւութեան եւ  
անձնութեան, նուիրական Ձեր  
ուխտին մէջ, դեպքի բարձրացում:

Աղօթարար  
Առաջնորդ Զփուռնիոյ  
ՀԵՒՈՆԴ ԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ

Գոհունակութեամբ ստորեւ կը ներ-  
կայացնենք, մեր ընթերցողներուն այն  
երկու նամակները զոր ստացած է տեղ-  
ւոյս Հայ սկաուտական կազմակեր-  
պութիւնը Ն. Վ. Պելիգայի Albert  
բազաուրին բարձր դիւանէն եւ Կալ-  
իսի Իսխանին անձնական՝ բարձրագոյն  
A. Lascellesէ:

«Պատրաս»ի խմբագրութիւնը Ամա-  
նորի եւ Ս. Ծննդեան Տօնին առթիւ կը  
ներկայացնէ ջերմագին շնորհաւորու-  
թիւններ եւ սրտագին բարեմաղթու-  
թիւններ իր աշխատակիցներուն, ըն-  
թերցողներուն եւ բոլոր սկաուտներուն:



Cabinet du Roi  
Palais de Bruxelles  
5 Յունիս 1922.

Թագաւորին դիւանը պատահե-  
ռանքի, Խմբագրի Հայ Սկաուտներու  
խումբ հաղորդելու Դուրին Աւետ-  
փառութեան շնորհակալութիւննե-  
րը այն մաղթանքներուն համար,  
որոնք Իրեն ուղղուած էին Ա.  
Ծնունդի եւ Դ. Տարւոյ առթիւ:

St James's Palace S. W.  
5 Յունիս 1922

Պէտք է ինքնակամ Պալատի Իշխա-  
նին անկեղծ շնորհակալութիւնները  
յայտնել Խմբագրի Հայ սկաուտ-  
ներուն, Ա. Ծնունդի եւ Դ. Տար-  
ւոյ առթիւ անոնց զրկած մաղ-  
թանքներուն համար:

Դուրին Արքայական բարձրու-  
թիւնը իբր Պալատի սկաուտապետ՝  
ձեր բանակներուն կը մաղթէ եր-  
ջանիկ ու բարեբաւարի Դուր Տա-  
րի մը:  
Անկեղծօրէն  
A. LASCELLES





ԻՄՔԱԳՐԱԿԱՆ

## Ս. ԾՆՈՒՆԴԸ

Բնութեան մէջ ամէն շարժում, ամէն գաղափար ծնունդ մ'ունի, հոգ չէ թէ գիտականօրէն որոշ սկիզբ մը չ'ունենայ որքէ նոր եղելութեան մը յայտնակերպումը, սակայն և այնպէս մարդկայնօրէն տրուած և շեշտուած են թըւակասններ որոնցմով յատկանշուած և ճանչցուած է ամէն գեղեցիկ ու ազնիւ ներշնչում:

Քրիստոսի Ս. Ծնունդի փառաբանումը մէկ յարգալիք արտայայտութիւնն է Քրիստոնէութեան և տնոր գաղափարականին՝ որ կը ձգտի սեր յառաջացնել մարդկայն մէջ ու զանոնք առաջնորդել, այդ բարձր զգացումը իբրեւ բուն կերտել մարդկային ապագայ անդորր և անքոյթ կեանքը:

Մարդիկ իրագործած են արդեօք, կամ գէթ կ'ա՞յ սաղմը այդ իտէալին՝ իրականացման յոյս պարգեւող իբրեւ ազդակ: Ահա թէ ինչ բանով կը շահագրգռուինք մենք և այս հարցումին կուտանք հաստատական պատասխան: Թառաջ դիմութիւնը և խաղաղութիւնը չ'պիտի ըլլան մէկ օրէն միւսը՝ այս ցոյց տըւած է անցեալ և ներկայ պատմութիւնը՝ ուր կը տեսնուի աստիճանական բարձրացում մը, վերելակում գէպի ցանկացուած աշխարհը. և տնոր համար ինչքան մարդկային խռովքներ, գալարումներ, պատերազմներ, գաղափարական թռիչքներ չեն յառաջ եկեր, որոնց բոլորին ալ թաքուն նպատակը ինչպէս պայծառօրէն կ'երևի չէ այլ ինչ եթէ ոչ երջանիկ միջնորդութիւն մը ստեղծումը կարելի և անկարելի միջոցներով...

Այսպէս անընդհատ պայքարով, եւ ու եփով լեցուն է եղեր մարդկային բնութիւնը, այնպէս որ չ'երևիր որոշ մեկնակէտ բոլոր շարժումներուն, տըրւած ըլլալով որ անոնք իրարու շարունակութիւնը, իրար սեղմօրէն օղակաւորուած՝ երևութական հանգրուաններ (stave) են միայն:

Մենք սկսուածն'րա ալ կ'առնենք Ս. Ծնունդը իր իսկական իմաստով, մեծ գաղափարականին օրպէս մարմնաւորուած յստակ ապացոյցը՝ մարդկային ընկերութեան լուսագոյն ապագային ի խնդիր, որ չ'ուշանար և որուն հաւատքովը կ'ապրին ազգ և ազինք:

Հայ սկսուածները այս Ս. Տօնին առթիւ կրկին անգամ ձայն կը բարձրացնեն ու կ'ըսեն. ապագան մեր նպատակներունն են, մեր հետապնդած աշխարհն է ու ամեն ոք թող խաղաղութիւն մ'զգայ ինքն իր մէջ, խաղաղութիւն մը գոհունակութեամբ պարուրուած, գոհունակութիւն մը ճշմարիտ գործի մը հաւասար ոգւորման, ճշմարիտ գործ մը որ ԲԱՐԻՆ է և զոր իբրեւ ոգի և լուսոյ ջահ ունի սկսուածիդը:

Թառաջապահներ ըլլալ և ոչ թէ ուշ մնացողներ, յառաջ նայիլ և ոչ գէպի ետ ուղղել հայեացքը, ահա մեր գործին, իսկ ճամբան լուսաւոր գէպի տեսլական կեանքը, եթէ ոչ հասնելու՝ գոնէ մօտենալու անոր՝ սկսուածին ներաշխարհին մէջ ապրող հոգիին, ազնիւ բարախումբներուն առարկան է:

Սկսուածները կը սիրեն զիրար, մեկն հայերս սիրե՛նք զիրար, ու սիրով ըսեղծենք Հայուն երջանիկ կեանքը, ահա թէ ինչ կը մաղթէ «ՊԱՏՐԱՍՏ» Ս. Ծնունդի առթիւ իր տառապած և զոհաբերուող լեզբին:

Հայ սկսուած, կը ջանա՞ս տարածել ու սպառել «Պատրաստ»ը:

Հայ անհա՞ս, արձանագրուած ես Հայ Պոյ-Սկսուած:

Յերու Օրկան «Պատրաստ»ին:

«Պատրաստ»ը կը ծախուի (Запроси) Գրաստի:



Իզմիրի Հայ Պոյ-Սկսուածներու Ա. Բանակը  
La 1re. Troupe des Boy-Scouts Arméniens  
de Smyrne

## ՀԱՅ ՍԿՍԱՌԻՏԸ

Ազգին վերաշինութեան և պիտի շարունակուի վերակենդանութեան գլխաւոր ազդակներուն և հիմնադրութիւններուն մէջ՝ առաջին գիծին վրայ իբրեւ յառաջապահ ոյժ ըլլալու կոչուած սկսուածիդը:

Մտնուելով սկսուածիդի հրապարակաւ գաղափարին մտասեռած իր բոլոր ուշը ակնդէտ պիտի սպասէ հասնելու պատմութեան այդ հրապարակէ տարիքին:

Պատանին՝ նոր խանդով ու եռանդով տոգորուած պիտի նետուի սկսուածական ասպարէզին մէջ և հոն՝ պիտի օծէ իր նորածին սիրտը առողջ ու փրկարար սկսուածներով, պիտի սրբագործէ իր միտմիտ հոգին՝ արբունքի վտանգաւոր և փորձիչ հրապոյններէն, պիտի զրահէ իր կաղապար ուելու հալամէտ միտքը՝ անմահ գիտութեան ընձեռած անծայրածիր ամբարներէն և իր ֆիզիքական թանկագին առողջութիւնը աշխարհի բազմազան ու այլապէս փորձութիւններէն զէմ պաշտպանելով պիտի փութաք ըլլալ բանիմաց ու ժրաջան անդամ մը իր Ազգին և հայրենիքին:

Իզմիրի սկսուածական հիմնադրութիւններու մէջ Հայկականին անյողդողդե յարատեւ կայունութիւնը, արդէն ինքնին ապացոյց մըն է, թէ հայ պատանին կրցած է այդ բարեբար հիմնադրութեան բարեբար օգտակարութիւնը կռահել և ընդունիլ թէ կարող է մեծ գեր մը կատարելու մեր տառապած ու դժբաղդ ազգին ապագայ ճակատագրին վրայ:

Այսպէս ուրեմն Հայ սկսուածը՝ մտքով համեստ ու զարգացած, սրտով ազնիւ ու վեհանձն, հոգեով՝ մաքուր ու անալլայլ, ֆիզիքականով՝ առողջ ու անպտուր, պիտի ըլլայ՝ առանց չփանալու, չփացած զաւակը Հայութեան և անոր յոյսը՝ ապագային:

Հ. ՄԱՄՈՒՐԵԱՆ



ՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ

Հայ սկսուած կոչուած է ներկայիս  
տարիւր ըր պարտականութիւնը  
նորայ իր պատանի հոգայրներուն,  
որոնք այսօր ցիր ու ցան ու իրենց  
այրենի օճախներէն զրկուած՝ կը թա-  
ւառնին անտիրական, և ո՛վ միթէ ա-  
նց ամէնատաք վերաբերումը ցոյց  
տալ տայ, և բարոյական մթնոլորտ  
պիտի ստեղծէ, եթէ ոչ հայ սկա-  
ւոր, անոնց տալով իրր ճշմարիտ  
պարհիւռ ամէն միջոց և թող  
տալով որ կեանքի ճամբուն մէջ  
որոնք յուսահատօրէն պլլուին մոլու-  
թիւներու:

Հայ սկսուածներ, Ձեր ուխտին  
հաւատարիմ, ամէն ջանք ի գործ  
է դնէք փրկելու այդ անմեղ  
պատանիները և ձեռք ձեռքի տուած  
տարատեղիւ այն կենտուեակ սե-  
ւեղը որ կը կոչուի ապագայ ճշմա-  
րայն Հայ ֆաղափաղի: Գործնականա-  
պէս ապացուցէք մեզ այն հաստատե-  
լունքը ձեր վրայ, և համագոր-  
ծակցան ոգիով ըդառնալ գացէք Ձեր  
տնու հրահանգներուն: Եւ այն ա-  
նկերկայի ձեր փոքր աշխատանք-  
ը ապագայ մեծ գործունէութեան  
նախաքայլերը կարելի է նկատել:  
Ներկայ վատ պայմաններուն մէջ  
պարտաւոր ենք մեր աշխա-  
տանքները միացնել և սկսուածական  
տնայտ ոգին բարձրանալ՝ քաղենք մի-  
մեկէ մեզ յառաջ այն ուղիէն զորս  
եւ մեզ բարոյական կեանքը:

Ու ես, խորապէս համոզուած թէ  
հաւանդ Հայ սկսուածները համա-  
կուցական ոգիով տոգորուած են,  
խոր հաւատքը ունիմ թէ Աշ-  
խատանքը իր ընդհ. Հայ Սկսուածները  
մէկ տակ հովանաւորուած՝ պիտի  
վստահութեան արժանանալ  
վաղու պատուաւոր Հայ  
բարոյացիներ:

Թ. ՄԵՄԱՏՈՒՐԵԱՆ

ՍԿԱՆՈՒՅՆԵՐՈՒՆ

Եղբայր սկսուածներ,  
նոր տարւոյ սեմին վրայ՝ շատ գե-  
ղեկ բան մ'է յառաջիկայ շրջանին  
ծրագիրներ կազմել ու անոնց  
աւարտիմ մնալ:

Անցեալ տարի Հնդկաստանի մէջ  
նոր քաղաքական նոր ճարտար առ-  
հետեւեալ ծրագիրները կը կազ-

մարտնային պիտի ըլլամ, քանզի կան  
ոմանք որ կը վստահին վրաս:

Մաքուր պիտի չլլամ, քանզի կան  
ոմանք որ կը մտածեն վրաս:

Ջորաւոր պիտի ըլլամ, քանզի պար-  
սիմ արհամարհել ճառապանքը:

Քաջ պիտի ըլլամ, քանզի կեանքի  
մէջ շատ արգելքներ կան յաղթահարե-  
լիք:

Ամենուն բարեկամը պիտի ըլլամ—  
աղֆախին, բուռնին ու անոնք:

Պիտի գիտնամ ճալ, ճալ՝ մոռնալով  
այս ժեսքս:

Խոնարհ պիտի ըլլամ, քանզի կը  
ճանցնամ ամբողջ սկսուածներու:

Պիտի բանամ աչեքս, պիտի խն-  
դամ, պիտի սիրեմ եւ բարձրանալով  
պիտի բարձրացնեմ:

Իզմիրի Հայ պոյ-սկսուածները շը-  
նորհաւորելի են իրենց նախանձելի  
դիրքին համար: Մեծապէս զգացուած  
եմ իրենց կարգապահ ու ճշմարիտ ըս-  
կանական վարմունքէն:

Դուք պատանիներդ, պիտի հիմ-  
նէք ապագայ Հայ ազգը: Երբէք մի  
վհատիք: Ազգ մը որ դարերէ ի վեր  
իր կրած սոսկալի ու վայրագ հարս-  
տահարութիւններէն հալածանքներէն  
վերջ կարողացած է ցարգ մաքուր  
պահել իր ընտանեկան կեանքը՝ և  
և անխախտ՝ իր քրիստոնէական հա-  
ւատքը, այդ ազգը երբեք չի կորսուիր:

Պիտի գայ օր մը երբ Հայաստան  
զօրաւոր երկիր մը պիտի ըլլայ և ա-  
զատօրէն իր զաւակները պիտի առաջ-  
նորդէ դէպի լոյսը, ազատութիւնը և  
կեանքը որոնցմէ երկար ժամանակէ  
ի վեր զրկուած էին: Ու այդ օրը, ա-  
նոնք որ կը սիրեն իրաւունքը և կ'ա-  
տեն անարդարութիւնը, որ կ'ուզեն  
ազատութիւնը և կը գարշին քոնա-  
պետութիւնէն, որ ամէն բանէ առաջ  
կը հաւատան թէ ճշմարտութիւնը պի-  
տի յաղթէ ուժին, այդ օրը պիտի  
բարձրացնեն ուրախութեան և հրճը-  
ւանքի ձիւ մը:

Բարեկոն, Պարսկաստան և Հոռոմ  
հիմնուած էին ուժին վրայ. անոնք  
անսահման կայսրութիւններ շահեցան:  
Ո՛րք են այսօր:

Բայց Հայաստանը կ'ապրի: Առանց  
գրօշի, առանց սեփական երկրի, տա-  
կալին կը մնայ Ան: Մինչ Բարեկոն,  
Պարսկաստան և Հոռոմ բարձրացան, ին-  
կան ու անյայտացան. գուցէ տակա-  
ւին ուրիշներ ալ պիտի անցնին,  
բայց Հայաստան կայ ու պիտի մնայ:

Այդ օրը, Հայաստանը զինուորէ  
աւելի պէտք պիտի ունենայ ուղղա-  
միտ քաղաքացիներու որոնք պիտի  
հիմնեն զօրաւոր ու ազնիւ Երկիր մը,  
ուր կեանքը ազատութիւնը և հաւա-  
սարդութիւնը ժանկազին պիտի ըլլան:  
Ու Ազատութիւն, Հաւասարութիւն, Եղ-

բայրակցութիւնը պիտի դադրին այլ-  
ևս անիմաստ ու պարզ խօսքեր ըլ-  
լալէ այլ պիտի ըլլան այնպիսի մեծ  
ճշմարտութիւններ որոնցմով կարելի  
է արժեքներ մարդկային կեանքը:

Կը բարեկամ զձեզ սկսուածական բարեկոն,

S. Ralph Harlow

Խմբագրէ՝ Ամերիկեան Պոյ-Սկսուածներու  
(B. S. A.) Իզմիրի առաջին բաժնակին

ՍԿԱՆՈՒՅՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ

Սկսուած, նոր բառ մը մեզ՝ Հայոցս  
համար, սակայն այլևս ընտանի դար-  
ձած, քաղցրահնչիւն, կ'արտասանենք  
զայն ու անկէ կ'ապաստենք կարծես  
փնտռուածը՝ ապագան:

Սկսուած, զինադադարէն վերջ  
մուտ գտած է մեր մէջ, մեր խան-  
դավառ ու իրականացած... յոյսերու  
նախօրեական, ու այն շարան շարան  
խումբերուն մէջ իրաւամբ՝ հպարտու-  
թեամբ կը տեսնենք մեր նոր սե-  
րունդին շարժումը, ոգեւորութիւնն  
ու «պասքաս» սկսածութիւնը դէպի Ազ-  
գն ու Հայրենիքը:

Պատանի վիճակէն տրամադրուիլ  
իր խոյնովդին, իր տառապած Մայր  
Ազգին ինչպիսի՜ անսգիւտ պարգև մ'է  
այո՛ւ այդ ոգին լուսաւոր գիտակցու-  
թեան մը դրոշմով շքադարձուած պի-  
տի ուզէինք տեսնել ու ծափողունել  
Հայ սկսուածներուն մէջ ու անոնց ա-  
ռած քայլերուն առաջ միշտ պատ-  
րաստ պիտի ըլլայինք ճամբայ տալու,  
որպէս նոր կեանքը, իր բարոյականի  
վստմութեամբ և համակ գեղեցկու-  
թեամբը:

Դառն էր տեսնել անտարակոյս որ  
քիչեր մնացին այդ շարքերուն մէջ,  
բայց մնացին ու կը շարունակեն տա-  
կալին մեղուաջան սկսուածներ որոնք  
բարեկամներս անուանելով գոհունա-  
կութեան շունչ մը կը դնեն բառիս  
մէջ, ճանչնալով զիրենք, մօտէն հե-  
տեւելով անոնց և որոնց պիտի ուզէի  
ուղղել պերճաբարբառ ուղերձ մը ե-  
թէ կարող ըլլայի:

\*\*\*

Բայց թէ բարեկամներս, Ձեր գոր-  
ծը պերճախօս է բոլոր խօսքերէն,  
ձեր ճամբան ուղիղ է բոլոր խորտ ու  
բորտ դարձուածքներէ ու ձեր իրարու  
մէջ ստեղծած ցանկալի ընկերականու-  
թիւնը՝ վեր ամէն բանէ:

Ունեցէ՛ք սիրտը զգալու, ունե-  
ցէ՛ք միտքը գործելու և հոգին՝ թը-  
ռիք առնելու՝ ի խնդիր գաղափա-  
րականի մը, որ սուրբ է, ի խնդիր  
բարոյականի մը որ վեհագոյնն է, ի  
խնդիր խորհրդաւոր տաճարին որջմիտ



հայրենիքն է և որուն հիմերը գնելու կոչուածներն էք դուք:

Ունեցէ՛ք արդար փառասիրութիւնը, ո՛չ ոք պիտի մեղադրէ ձեզ, ու վստահ եղէք թէ պիտի պանծացնեն ձեզ երբ օգտակար գործ մը 'ի յայտ կը բերէք, երբ պատուաւոր հայ երիտասարդը կը մարմնացնէք ձեր մէջ, երբ ձեր ազգակիցներուն հանդէպ նշանակութիւնը ոգին ցոյց կուտայ, երբ կը յառաջանաք սկստական ըսկզբունքներուն մէջ, ու կը ջանաք նոր ընկերներու մէջ ալ այս սերմերը ցանել ու ստեղծել սկստական եղբայրակցութիւնը:

Այսպէսով ձեր շրջապատին վրայ ևս պիտի ունենաք բարոյական յանկուցիչ ազդեցութիւն մը որպէս Հայ սկսուած ազնիւ և դէպի կատարելութիւն՝ իր ձգտումովը շեշտուած:

Ահա՛ ինչ որ կը մաղթեմ ձեզ բացառիկ «Պատրաստ»ի հրատարակութեան առթիւ:

S. Ա. ՎԱՐԴԱՆԵԱՆ

## ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ ՕՏԱՐ ՍԿԱՌԻՏ-ՊԵՏԵՐՈՒ ԿՈՂՍԷ

ԱՄԵՐԻԿ. ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ ՆԱԽԱԳԱՀԷՆ

Երբ աշխարհի սկսուածները մեր ներկայացուցած սկզբունքները և մեր կերպրկած դրութիւնը գործադրութեան գնեն, առաջին քայլը կատարած պիտի ըլլանք դէպի պատանիներու եղբայրակցութիւնը, հետեալ բարձրագոյն մարդկային եղբայրակցութիւնը: Դիմաւոր տղուն եղբայրական բնազդները խանդավառութեամբ առցուն, կ'աճին մինչեւ չափահասութեան տարիքը և այսպէս կը պարտադրեն անոր զահագրող ոգի մը պահել իր ընտանիքէն և հայրենիքէն դուրս, նաեւ աշխարհի վրայ ապրող իր բոլոր նմաններուն հանդէպ:

Ահա մեր նպատակը:

Colin H. Livingstone

ՊԵՆՏԻԿԱՅԻ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ ՊԵՏԷՆ

Երիտասարդութիւնը մերն է. եւ երիտասարդութիւնը վաղայ մարդկութիւնն է, ապագայ սերունդն է:

Սկսուածներս կը կազմենք խաղաղութեան ճշմարիտ յառաջապահներու բանակը. բան մը ուր ոչ թէ ուրիշին ինչքը կողոպտել կը սորվին այլ ինքզինքը պաշտպանել չարիքին դէմ: «Խաղաղութիւն բարի մարդկանց» կ'ըսէ Աստուածաշունչը. կը փափաքինք այդ բարի մարդերը ըլլալ. պատասխանենք ուրեմն, ամեն:

I. Corbisier

ՀՈՒՆՏԱՅԻ ՍԿԱՌԻՏ. ՆԱԽԱԳԱՀԷՆ

Վստահ եմ որ եթէ սկսուածական շարժումը քսան տարի առաջ գոյութիւն ունենար, մարդկութիւնը այս վայրագ պատերազմը չ'պիտի տեսներ: Նոյնպէս համոզուած եմ որ բացի սկսուածութենէ ուրիշ ոչ մէկ Ազգերու դաշնակցութիւն կարող պիտի ըլլայ խաղաղութիւն պարգեւել աշխարհի:

Սկսուածական շարժումը, ամենէն սքանչելի կազմակերպութիւնն է որ կրնայ մեր ապագայ սերունդը պատրաստել կարգապահ և ուղղափառ:

Աշխարհի բոլոր սկսուածներուն յաջողութիւն կը մաղթեմ:

De Groot Van Eindhoven

Ն. Վ. ԿԱԼԼԷՍԻ ԻՇԽԱՆԷՆ

Ամենամեծ հրճուանքով է որ դիտեցի իմ սկսուած եղբայրներու և աղջիկ սկսուածներուն յաջողութիւնները այցելած բոլոր երկիրներու մէջ: Շնորհակալութիւններս յայտնելով իրենց եղբայրական ոգիներուն համար, յարատեւութիւն կը մաղթեմ անոնց և կ'ըսեմ. «Մէկը ամէնքին եւ ամէնքը մէկին»:

Edward

## ՍԿԱՌԻՏԻՆ «ԾՆՈՒՆԴ»Ը

(Սկսուածական հեփեսք).

Ծնունդ է Քրիստոնէութեան Ծնունդը: Պատանի սկսուածը պատկած է անկողինին վրայ ու կ'երազէ...

Պատեքալ մէջ Ատելութեան չարիքին դէմ կ'ուր. և հետո՛ւն բնութեան սարսաղագեցիկ ամայութեան մէջ, սկսուածին հայրը կը կռուի անոնց դէմ... մինչ մայրը արցունքներ աչքերուն վրայ՝ լռին հեկեկանքներ կ'արձակէ, վերջիչելով նախորդ տարիներու երջանիկ Ծնունդները:

Երջանիկ Ծնունդներ. երբ Ծնունդը պապան իր սուսնական ապիտակ մօրութեամբ կ'այցելէր փոքրիկ սկսուածին և օճախին բուխերիկէն վար կը նետէր գեղեցիկ նուէրներ և խաղալիկներ:

— Բարի Ծնունդը պապան մոռցած զիս այս տարի, կը մտածէր պատանին երբ յանկարծ սենեակին մէջ տարօրինակ ազմուկ մը լսուեցաւ, օճախին դռնակը բացուեցաւ և այլանդակ էակ մը, թուի երկայն վերարկու մը հագած, փառաւոր սպիտակ մօրուք մը իր գլուարթ երեսէն երկարած, յառաջացաւ դէպի անկողինը: Ծնունդը պապան էր, իր ծէջած պաղ ձեռքով բռնեց տղուն լայն կը և իր դողդաջուն բերանէն թափառ հեռեկալ

խօսքերը. «Դէ՛, փոքրիկս, ե՛կ ինչ հետ»:

Պատանին կարծես ելեքտրական ցած՝ ստրկօրէն հնազանդեցաւ և այսպէս՝ երկու ընկերները աներևութացան:

Խաւար գիշեր է. կը յառաջանաւ առանց հողին դաշնու, կարծես խորհրդաւոր դօրութենէ մը տարուած: Ու այդ խոր լուսութեան մէջ սկսուած կարծեց լսել իր ճամբուն վրայ սովորած ամբողջի մը հոգեվարքի վերջի հանգիւնները... ու բոլոր մտքներս սարսափ:

Կը քալեն ու կը քալեն ձիւնածածկ գետնին վրայ և ահաւոր խաւարին սառն լուսութեան տակ. և սկսուած իր ամէն մէկ քայլափոխին կարծէր կոխել վայրագ պատերազմը մը անսեղ զոհերու դիակներուն վրայ: Ազգաները կը թռչէին մինչ երկրէն կ'անհետանային: Երկրէն կ'անհետանային: Երկրէն կ'անհետանային: Երկրէն կ'անհետանային:

Յանկարծ թնդանօթի մը պայթիւնը սարսեց զիրենք. և այդ ընթացքով պատանի սկսուածին աչքին առջև տեսնուեցաւ մը երևցաւ, Պատանին, որ իր աջալուրջ անհարկ ընթացքով խոր խաւարը կը ճեղքէր գէթ թշնամի շարքերը:

— Հայր, դո՛ւն ես... կ'մկմացաւ լուռ մարդը չի տեսաւ, ու չի տեսաւ խօսքերը: Արձանի մը նման կանգնած, միշտ կատաղօրէն կը դիտէր իր աչքին պարզուող խաւար վրայ: Ուր աշխարհի տարաբաղ զարկութեան դժբաղդութիւնները, վայրագ պատերազմները, սովը և մէկ բառով աշխարհի չարիքները կը դարբնուէին:

— Հայր... ու սարսափով նշմարեց որ չարիքը՝ երեքգլխեան այդ գազանը — պատերազմ, սով և անբարեկամութիւն — դուրս եկաւ այդ անհոգէն և նշան առաւ դէպի անհոգէն:


— Ուշագրութիւն, հայր. կտրիճ սկսուածը խոյացաւ դէպի հայրը և քաջաբար կուրծք տուաւ մահացու հարուածին որ կուգար չարիքի վիհէն: Երկրորդ թնդանօթի մը պայթիւնը սարսեց զինք ու խեղճ պատանին արթնցաւ գողգոթ լով:

Երա՛զ էր. տեսիլք մը որ իրենք չէին ընկեր զոհաբերութեան ոգին, նորակաւ սէրը, նուիրումը, և որ բազմ մ'աւելի սկսուածական Ծնունդներէն էր իրեն...

Ու այդ երջանիկ Ծնունդէն վերջ պատանին որոշեց ա՛լ աւելի սերտօրէն փարիլ սկսուածի մը քան որ նախ միայն կտրելի է կռուիլ մարդկային չարիքին գէթ աշխարհի պարզ լուսնաւոր ըղձաջուած խաղաղութիւնը:

Թարգմ. Յրանտեմիս  
ՉՍԻԷՆ ՅԱԲԷԹԵԱՆ





**ՍԿԱՌԻՏԱԿԱՆ  
ՆԵՐՔԻՆ ՇԱՐՓՈՒՄ  
ՀԱՒԱՔՈՅԹ**

Անցեալ կիրակի, 8 Յունվար, առաւօտ ժամը 10,30ին կեդր. Սկառուական Տան մէջ Հ. Պ. Ս. Մ.ի բանակներու կողմէ հաւաքոյթ մը սարքուեցաւ ի պատիւ Կ. Պոլսէն տեղս ժամանած Հ. Մ. Ը. Մ.ի լիազօր պատուիրակ Պր. Թ. Մեծատուրեանի։

Հաւաքոյթը անցաւ շատ գուարթ ու մտերմական, նոյնիսկ կարելի է ըսել՝ միակը նախորդներուն մէջ քան որ հոն դրուեցաւ հիմը Կ. Պոլսոյ եւ Իզմիրի Հայ Պոյ-Սկառուներու եղբայրակցութեան եւ Միութեան։

Յաջորդաբար խօսեցան Պր. Մեծատուրեան, Պր. Եանըգեան, որոնք ստիպողական պէտքը շեշտեցին բոլոր հայ սկառուական կազմակերպութեանց միացման։ Պր. Զաւէն Յարէթեան յանուն բոլոր ըսկառուներուն գեղեցիկ ուղերձ մը կարդաց Պր. Մեծատուրեանին, փառաբանելով Հայ Պոյ-Սկառուներու ընդհ. եղբայրակցութիւնը։ Կոկիկ հիւրասիրութենէ մը վերջ Յրգ բանակի աւագ առաջնորդ Զաւէն Ազատեան երգեց «Մայր Հայաստանը» իսկ Ա. Բանակի փոխ-խմբապետ Բ. Գուլում-ձեան և աւագ առաջնորդ Ն. Բարու-նակեան ջութակի վրայ «Duo» մը նուագեցին։

Պր. Մեծատուրեան շափազանց գոհ տպաւորութեան տակ բաժնուեցաւ հաւաքոյթէն։

**ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ**

Յաջորդ օրը, երկուշաբթի 9 Յունվար, երեկոյեան ժամը 7ին Հայ Ազգութի մէջ տեղի ունեցաւ Հ. Պ. Ս. Մ.ի Ընդհ. Ժողովը մասնակցութեամբ Կեդր. վարչութեան լիազօրներուն, Ընդհ. Պետին և բոլոր խմբապետներուն և ի ներկայութեան Հ. Մ. Ը. Մ.ի լիազօր Պր. Թ. Մեծատուրեանի։

Արդէն բաւական ժամանակէ ի վեր Հ. Մ. Ը. Մ.ի լիազօր Պր. Մեծա-

տուրեանի և Հ. Պ. Ս. Մ.ի լիազօր Պր. Եանըգեանի միջև բանակցութիւնները յառաջ կը տարուէին։

Ժողովը երկար ու կարեւոր վիճաբանութիւններէ վերջ միաձայն որոշեց որ Իզմիրի Հայ Պոյ-Սկառուներու Միութիւնը մաս կազմէ Կ. Պոլսոյ ՀԱՅ ՄԱՐԺԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀ. Մ. ՈՒԹԵԱՆ և կոչուի ԻԶՄԻՐԻ ՇՐՋԱՆ։

Ու այս առթիւ կրկնօրինակ բանաձեւ մը ոտորագրուեցաւ Պր. Թ. Մեծատուրեանի և Պր. Մ. Եանըգեանի կողմէ։

Ստորև կուտանք այդ բանաձեւը։

**Բ Ա Ն Ա Ձ Ե Ի**

Զինադադարի կնքումէն անմիջապէս վերջ Կ. Պոլսոյ եւ Իզմիրի մէջ կազմուած ու գործող սկառուական երկու մեծ կազմակերպութիւնները, Պոլսոյ Հայ Մարմնակրթական Ընդհ. Միութիւնը եւ Իզմիրի Հայ Պոյ-Սկառուներու Միութիւնը որոնք իստաշով եւ նպաստով նոյն՝ ցայտմ յարաբերութեանց դժուարութեան պատճառաւ կասեցաւ եւ ամբողջական համագործակցութենէ զուրկ՝ օգտուելով Հ. Մ. Ը. Մ.ի լիազօր պատուիրակ Պր. Թ. Մեծատուրեանի Իզմիր ներկայութենէն, յատենի ժողովոյ Հ. Պ. Ս. Մ.ի Կեդր. վարչութեան պատուիրակներուն եւ ի ներկայութեան Հ. Պ. Ս. Մ.ի խմբապետներուն ու յարգելի պատուիրակին, կուգան պաշտօնապէս յայտարարել Հայ Պոյ-Սկառուներու Միութիւնը, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Իզմիրի շրջան։

Առ այս բանաձեւուելով սոյն բանաձեւս ստորագրուած է։

9 Յունվար 1922

Հ. Պ. Ս. Մ.ի լիազօր Ս. ԵԱՆԸԳԵԱՆ      Հ. Մ. Ը. Մ.ի լիազօր Թ. ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆ

վերջապէս 9 Յունվարի պատմական նիստով հիմը դրուեցաւ Հ. Պոյ Սկառուներու ընդհ. եղբայրակցութեան և միութեան։ Այսպէս աշխարհի վրայ ապրող բոլոր հայ սկառուական կազմակերպութիւնները Ամերիկայէն մինչև Պարսկաստան ձեռք ձեռքի երկարելով մէկ ձախտ կը ներկայացնեն օտարին առջև, Պոլսը իբր կեդրոն ընդունելով։

— Անցեալ Հինգշաբթի գիշեր, 12 Յունվար, Պր. Մ. Եանըգեան Հ. Մ.

Ը Մ.ի Իզմիրի շրջանի սկառուներու կողմէ Պր. Մեծատուրեանի յանձնեց կարգ մը խիստ կարեւոր թեֆնիֆական աշխատասիրութիւններ ու առաջարկներ իսկոյն կեդրոն ուղարկուելու համար։

Նոյնպէս նոյն օրը ի ներկայութեան Հ. Մ. Ը. Մ.ի լիազօրին, կարօտ պոյ սկառուներու զգեստաւորման ի նըպաստ սարքուած վիճակահանութիւնը քաշուեցաւ, որուն շահող թիւերու ցուցակը կուտանք սոյն թիւով։



**ԱԶԶԻԿ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԷՐ**

**ՄԵԾ ԲԱՆԱԿՈՒՄ ՄԸ ԱՆԳԼՈՅ ՄԷՋ**

(Նկարագրուած՝ Պելիգացի աղջիկ-սկստէի մը կողմէ)

Օգոստ. 17ին, Պելիգացի աղջիկ սկառուներու թողուցիւք Պրիւսիա երթալու համար մեր Անգլիացի քոյրիւն քով։ Շատ գեղեցիկ ու հաճոյ յալի ճամբորդութենէ մը վերջ ոտք կը կոխենք Լոնտոնի գեանին վրայ ուրկից երկու շաբթով կ'ուղղուինք Ուաթերլօի կայարանը։

Կառախուսքով ժամուան մը ճամբորդութենէ վերջ կը հասնինք Կոստանիլի ուր տեղի պիտի ունենայ մեր բանակումը։ Ժողովուրդի մեծ խանդավառութեան տակ կ'իջնենք գետին ու կ'ուղղուինք դէպի մեծ սրահ մը ուր պիտի անցնէինք գիշերը։

Յաջորդ առաւօտ մեր նախնական պատրաստութիւնները հոգալով կ'ուղղուինք դէպի դաշտ ուր կ'սկսինք հաստատուել մեր վրանները և այնպիսի եռանդով մը կ'աշխատենք որ արդէն մինչև կէսօր կանանչադարձ մարգագետինը ծածկուած էր սպիտակ սուկներու նմանող վրաններով։

Ճաշը պատրաստ է։ Յետոյ հանգիստը։ Կ'սկսինք նամակներ գրել, բայց և այնպէս լռութիւն չի տրիք մեր բանակումին մէջ։

Լոգանք և ժայլօք օգլօթ թէյ և պըտոյտ։

Ընթրիքէն վերջ Անգլիացի և Պելիգացի աղջիկ սկառուներու հաւաք-



ուսանող կրտսեր չորս և երգեցինք մեր տոմարի կրկերէն... մտածել որ մեր տաղին գիշերն էր վրանին տակ: ա՛հ ինչ հրաշալի է բնութիւնը, մանաւանդ անուշ ընկերականութեան մը շուրջ:

Կերակուրները կ'եփուին Պելճիգացիներու կողմէ, իսկ Անգլիացիները կը լափեն զանանք. Պէյտըն Բաուէլի կինը պատուեց մեզ իր ներկայութեամբ և անուշ ժպտով մը ըմպեց մեր պատրաստած թէյը:

Յաջորդ շաբաթ օր ներկայ գտնուեցանք Անգլիացի աղջիկ սկաուտներու խումբի մը նախնական դասմանի, հեռագրի, մարզանքի և այլն փորձերուն, որոնք շատ յաջող անցան:

Նոյն օրը տեղի ունեցաւ նաեւ պար: Ո՛հ, ինչ գեղեցիկ ու անուշ է պարել մարգագետնի դալար խոտին վերայ, ազատ բնութեան զով օդը շնչելով, ու մենք պարեցինք, փառաբանելով Անկլո-Պելճիգական եղբայրակցութիւնը, ի վերջոյ սկաուտական նուագախումբը նուագեց երկու ազգային քայլերգները որոնք լսուեցան յօտնակայս ու բարեի կեցած:

Երեքշաբթի է, մեկնումի նախօրեակը: Պատրաստութիւնները կը տեսնենք, բայց ի՛նչ տխուր կ'ըզանք ինքզինքնիս: Դժուար է մեզ համար բաժնուիլ ազատ բնութեան ծոցէն կրկին երթալ իշխուռ համար քաղաքին ազտօտ միջնորդութիւն մէջ:

Յաջորդ առաւօտ արդէն ամէն ինչ պատրաստ էր. վերջին ճաշը կը կատարենք ու աղջիկ սկաուտներուս կառաւոր կ'ուզողուի դէպի հայտարան ու անկէ Պրիւսէլ:

Ճամբորդութիւնը կրկին հիանալի էր ու մենք այդ քաղցր մտածումներուն մէջ խորհեցանք թէ աղջիկ-սկաուտներս ալ կրնանք եղիւր ազատ շունչ մը շնչել դալար մարգագետինի վրայ տարածուած սպիտակ սունկերու նմանող վրաններու տակ:

#### ԸՆԿԵՐՈՒՂԻ ՄԸ

Մ. Խ.— Հանոյնով կը հրատարակենք սոյն նկարագրութիւնը՝ ստորագրուած Պելճիգացի աղջիկ սկաուտներու ԸՆԿԵՐՈՒՂԻ մը կողմէ:

Նոյնպէս ստացած ենք Պելճիգացի մեր աղջիկ-սկաուտ քոթակցէն այս բանակումի առթիւ իր յուշատետրէն փառուած նկարագրութիւններ զորս յարմար առթիւ պիտի հրատարակենք:

Կ'ուզե՞ք որ ձեր վաճառականական ու անձնական կնիքները չի կեղծուին, ամենեւէ այլ պատճառով տուե՞ցաւ նոյն հանձնարար փորագրիչ՝

ՎԱՀՐԱՄ ԳՊՐԱԼԵԱՆԻ:



Կ. Պոլսոյ Հայ Սկաուտները բանակումի միջոյին  
Les Boy-Scouts Armeniens de Constantinople au camp.

Մերօրի սիրահարի մը տպաւորութիւնը  
սկաուտական անցքի մը առթիւ

## ՀԱՅ ՍԿԱՈՒՏՆԵՐԸ

Արշալոյսը չէ բացած դեռ իր պայտսն անկման,  
Կը ֆնանայ ամեն ինչ ծոցը անհուն անհատին.  
Կը բարձրանայ բայց յանկարծ երգ մը հնչուն, առնական,  
Նման յեռնէն վար իջնող առիւծի մը գոռիւնին:

Հայ սկաուտներն են անոնք, ցեղին կտրիճ գաւազներն  
Որ արեւու առաջին շառային հետ արթնցած,  
Կ'ուզան օրը ողջունել իրենց երգովն անվեհեր,  
Եւ ծծել օդը կեանաշիր բարձրաններու լուսմած:

Մահուր է անոնց ճակատք իրենց հոգւոյն հանգունակ,  
Այփերուն մէջ անոնց կայ մեծօրիւնը ուժին,  
Եւ իրենց լայն կուրծքին տակ, անմահ հաւատքը ցեղին:

Հազիւ յիսուն կան անոնք, վա՛ն դեմքերով մանկունակ  
Բայց եւ արդէն կը տեսնեմ մեջք իրենց կուռ շարփին  
Կոռի գացող բանակ մը՝ զուարթ երգը շրթունքին...:

Գ. Ա.

## ԾԱՀՈՂ ԹԻԻԵՐ

ԿԱՐՕՏ ՊՈՅ-ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ ԶԳԵՍԱԿՈՐՄԱՆ ԻՆՊԱՍՏ  
Վ Ի Զ Ա Կ Ա Հ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

| Թիւ |                                | Շահող Թիւեր |
|-----|--------------------------------|-------------|
| 3   | Գորգ մը                        | 720         |
| »   | 4 Հայաստանցիի մը նկար          | 1283        |
| »   | 5 Զոյգ մը ճարտնական աշտանակ    | 1351        |
| »   | 6 Գրպանի ժամացոյց մը           | 1402        |
| »   | 7 Տուփ մը հոտեղէն              | 1305        |
| »   | 8 Զոյգ մը բարձի երես           | 155         |
| »   | 9 Մխամբող մը                   | 1201        |
| »   | 10 Տուփ մը հոտեղէն             | 1301        |
| »   | 11 3 Հոտաւէտ օճառ              | 1624        |
| »   | 12 Սեղանի ժամացոյց մը          | 1355        |
| »   | 13 Զոյգ մը պատի գորգ           | 181         |
| »   | 14 Պատի ժամացոյց մը            | 1626        |
| »   | 15 Գաւազան մը                  | 946         |
| »   | 16 Հովանոցի կոթ մը արծաթ ջուլը | 1045        |

Ծանօթ.— Սոյն Թիւերու տէրերը կրնան դիմել Ընդհ. Պետ. Պ. Մ. Եանդգետնի ստանալու համար իրենց շահած իրերը:



ՄԺԽԱՐԶԻ ԲՈԼՈՐ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒՆ

Ծնունդի Ձեր այս երջանիկ օրե-

ն կը մաղթեմ որ 1922 տարին

անառապարտ մէջ սկսուած եր-

անկութիւն և ընդհանուր սկսուած զ-

ն յաջողութիւն բերէ:

Կարելի է արդեօք ասկէ լաւ մաղ-

անք մ'ընել Ձեզ:

Սկսուածներ, կ'ուզէ՞ք սրտով ին-

չհա ըլլալ և լաւագոյն հաճոյքը

բերել:

Մեզմէ իւրաքանչիւրը թող այսօր

աւելիս բարի գործ մը կատարէ օ-

տարականի մը: Ձեռք մը հագուստ

դրածին, քիչ մը ուտելիք՝ ձեր կը-

ն կամ փոքրիկ խեղճ սղոռն:

Ուրիշի օգտակար ըլլալու մտա-

ն իսկ բաւական է որ միշտ

ձեր գործէք քանզի ձեր այդ ա-

րքով հազարաւոր թշուառներու

հոգիները պիտի լսէք:

Ասիկա սկսուած կան լաւագոյն ըզ-

նանքը և հաճոյքը պիտի ըլլայ:

Եւ այս անթիւ հա ձեզ կրկին կը

մաղթեմ. «Բարի եւ երջանիկ Ծնունդ»:

Աշխարհի Ընդհ. Սկսուած Պետ

ՌՈՊԵՐԹ ՊԵՅՏԸՆ-ԲԱՌԻԷԼ



Գ. Պոլսոյ Հայ Սկսուածներ  
Les Boy-Scouts Armeniens de Constantinople.

անոնց եւ ուշադիր եղի՛ր թէ ի՞նչ կը  
պակսի քեզ հակառակ քու թափած  
ճիգերուդ և ջանայ յաջորդ տարին  
նախորդէն լաւագոյն աշխատիլ և  
արդիւնքը վայելիլ:



ՎԱՀՐԱՄ ԳՊՐԶԼԵԱՆ

Բաւաժ Գոյումէսեան քիւ 38  
(Ֆրանկաց Թաղ)

Կը պատրաստէ նուրը և յատկ փո-

րագրութիւններ, Վաճառականական  
կնիքներ, լիւթեր, տնայնականներ, մօ-

նօկրամներ և այլն:

Կը պատրաստէ ամէն կերպով կոշիկ և  
արծաթեղէն գործեր, նուրը և ձաշակ  
աւոր:

Կը պատրաստէ ամէն կերպով կոշիկ և  
արծաթեղէն գործեր, նուրը և ձաշակ  
աւոր:

Կը պատրաստէ ամէն կերպով կոշիկ և  
արծաթեղէն գործեր, նուրը և ձաշակ  
աւոր:

Կը պատրաստէ ամէն կերպով կոշիկ և  
արծաթեղէն գործեր, նուրը և ձաշակ  
աւոր:

Կը պատրաստէ ամէն կերպով կոշիկ և  
արծաթեղէն գործեր, նուրը և ձաշակ  
աւոր:

Խմբագրէր.— Այս երկու մանուկնե-

րուն ճիշդօր արգելք չի՞ն ըլլար քեզ  
քննադատ:

Սկսուած.— Ո՛հ, Պարոն խմբագրա-

մէկը ա՛յնքան բարձր կը պառայ որ

միւսը չիմ լսեր.— արդիւնք.— Կա-

սարեալ յոռիքն:

Կը պատրաստէ ամէն կերպով կոշիկ և  
արծաթեղէն գործեր, նուրը և ձաշակ  
աւոր:

Կը պատրաստէ ամէն կերպով կոշիկ և  
արծաթեղէն գործեր, նուրը և ձաշակ  
աւոր:

Կը պատրաստէ ամէն կերպով կոշիկ և  
արծաթեղէն գործեր, նուրը և ձաշակ  
աւոր:

ՊԱՏՐԱՍԻ ԹԵՐԹՈՒՆ ԹԻԻ Ե

ՓՈԽԹՈՒՆ ՕՐԵՆՔՆԵՐ

(ՅԱՐԱԿԻՅ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ)

Գրեց. Մ. ԵԱՆԲԵԱՆ

(Ամփոփուած)

ՕՐԵՆՔ 7

Երբ հակառակորդ խաղացող մը

կողմէ կօլի գծէն դուրս կը նետէ,

կա կողմէն խաղացող մը գնդակը կը

գնդակը գալիս իսկ եթէ միւս

կողմի խաղացողէ մը գնդակը դուրս

անուի այդ պարագային անկիւնի

աւորդ խաղացող մը կօլի սահմա-

նին մէջէն կը զարնէ գնդակը զէպի

դաշտ. այս հարուածը կը կոչուի կօլի

հարուած (goal kick). գնդակը զար-

նուելու համար կը գետեգուի այն կող-

մը ուրկից դուրս ելած էր: Իրաւա-

րարը ուշադրութիւն ընելու պարտա-

զարնուի իր կողմէ ձախէն՝ ձախ կող-

մէն կը զարնուի:

Օրէնք 11 Բացատրութեան միջոցին

լսուեցաւ թէ իւրաքանչիւր անկիւն

մէկ հարտա տրամագիծ մը կ'ու-

նենայ. այս մէկ հարտա տրամագիծ

թիւն անկիւնի հարտածին տեղն է,

անկիւնի հարտածը տուողը չի կրնար

կողմէն գնդակը կօլի ձողերուն աջ

կողմէն դուրս ելած է Անկիւնի հար-





# Մ Ա Ր Զ Ա Շ Ի Ա Ր Հ



Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ

## ՖՈՒԹԲՈՒԼԸ ՄԵՐ ՄԷՋ

ՄԻՋՈՉԳԱՅԻՆ ԳԱԽԱԹԻ ՄՄԻՅՈՒՄՆԵՐԸ

### ԳԱԽԱԹ՝ ԱԲՈԼԼՈՆ

Առջի կիրակի, 8 Յունվար, Բանիօնիօնի դաշտին վրայ Աբոլլոնի խումբը մրցեցաւ Պարպէրիւնի հետ։ Այս վերջինն հազիւ ութ անգամով խաղաց խաղը և Օի դեմ 3 կօշով պարտուեցաւ Աբոլլոնին։

— Նոյն օրը Աբոլլոնի դաշտը պիտի մրցէին Բանիօնիօնը Երկաթուղիի խումբին հետ։ Բայց օրովհետեւ այս վերջինը բացակայ էր դաշտէն Բանիօնիօն յաղթական յայտարարուեցաւ։

Անցեալ կիրակի, 15 Յունվար, Բանիօնիօնի դաշտին վրայ Հայկա-կանը մրցեցաւ Երկաթուղիի խումբին հետ։ Հայկականը յաղթեց Օի դեմ 9 կօշով։

Նոյն օրը, Աբոլլոնի դաշտին վրայ տեղի պիտի ունենար Բանիօնիօն—Պարպէրիւն մրցումը։ Բայց այս վերջինին բացակայութեան պատճառաւ Բանիօնիօնը յաղթական յայտարարուեցաւ։

Ա Ր Դ Ի Ի Ն Ք

|                           | Նիշ |
|---------------------------|-----|
| Հայկական խաղացած 2 մրցում | 4 » |
| Աբոլլոն » 2 »             | 4 » |
| Բանիօնիօն » 3 »           | 4 » |
| Պարպէրիւն » 3 »           | 0 » |
| Երկաթուղի » 2 »           | 0 » |

### ՆՈՐ ՄՐՅՈՒՄՆԵՐ

Այսօր Աբոլլոնի դաշտին վրայ Երկաթուղիի խումբը պիտի մրցի Աբոլլոնի հետ։

Միջազգային գաւաթի

ամենամեծ մրցումը

Յառաջիկայ կիրակի, 22 Յունվար, (կ. ե.) ժամը 3ին Աբոլլոնի դաշտին վրայ տեղի պիտի ունենայ Միջազգային գաւաթի մրցումներուն ամենակարեւորը ընդմէջ ՀԱՅԿԱԿԱՆ և ԱԲՈԼԼՈՆ խումբերուն։

Նոյն օրը Բանիօնիօնի դաշտին վրայ տեղի պիտի ունենայ Պարպէրիւն—Երկաթուղի մրցումը։



Իզմիրի Հայկական Ֆութպօլի Ա. խումբը որ կը մասնակցի Միջազգային գաւաթի մրցումներուն, այնքա՞ն գեղեցիկ յաղթանակներ շահելով

**Ա. Զ. Է. —** Պր. Դէւորգ Յարէթեան (Խմբապետ), Պրք. Արտաշ Գօրանեան, Կարապետ Շահինեան, Ապրօ Ֆնտրզլեան, Զարեհ Մինասեան, Օհան Օհանեան, Խորէն Ահարոնեան, Համբարձում Կիւտէնեան, Մկրտիչ Յարէթեան, Մանուկ Հէքիմեան, Միհրան Ոսրաֆեան, ժողին Կոճնաժ՝ Պր. Հայկ Տէտէեան (Բերդապաճ)։

La 1ere Equipe Armenienne de foot-ball qui participe aux matchs Internationaux en remportant de si belles victoires.

Յունվար 29, կիրակի օր, կ. վ. ժամը 2.30ին Հայկականը պիտի մրցի Բանիօնիօնի հետ։

Նոյն օրը, Աբոլլոնի դաշտին վրայ տեղի պիտի ունենայ Պարպէրիւն—Երկաթուղի մրցումը։

## ՄԲՈՐԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

(Սեփ. թղթակցութիւն)

**ՊՕՔՍ. —** Անցեալ ամիս տեղի ունեցաւ պօքսի մեծ մրցում մը Հայկ Աստատուրեանի և Կ. Զամմարի միջև։ Հակառակ դատաւորին որոշման, բոլոր հանգիսականները և տեղական օտար թերթերը խոստովանեցան թէ Հայ կռիւմարտիկին հարուածները և խաղալու կերպը զինքը յաղթող հանդիսացուցին, և եգիպտոսի շահբօնը կոչեցին։

**ՖՈՒԹԲՈՒԼ. —** Քաղաքիս Union Sportiveի կազմակերպութեամբ այս ամսոյ սկիզբէն սկսաւ խաղացուիլ եգիպտոսի շահբօնութեան մրցումները։

Անցեալ կիրակի, երկու Արաբ զօրաւոր խումբերու միջև տեղի ունեցող մրցումը այնքան կատարի խա-

ղացուեցաւ որ պէքի մը սրունքին կօրը կտարեցաւ։

Իրաւարարը վայրագօրէն խաղցողները դուրս վտարել հրամայեց բայց չի հնազանդելնուն պատճառաւ խաղը ընդհատեց և փառը ընդ խումբը (discalifié) յայտարարուեցաւ։

— Գահրէի մէջ տեղի պիտի ունենայ, Աղեքսանդրոյ «Կամբ» և Գահրէի «Արաբա» ֆութպօլի խումբերուն միջև մրցում մը, որուն հետեւը պիտի բարգուռ անցեալ տարւան գոլմարին՝ Հայաստանի սկսուեցան ի նպատակ։

Ս. ՍԻՐԱԿԵԱՆ

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆ

Խմբագրութիւնս իր տրամադրութեան ներքեւ ունի աշխարհ բոլոր երկիրներու սկանսներ հասցէներ։ Ուսի հայ սկանսները որ կը փափաքին թղթակցիլ ներքեւ երկրի սկանսի մը հետ, Խմբագրութեան գլխավոր կրնան ստանալ զանոնք։

ՏԳԱԳ. ԴԷՇԻՇԵԱՆ